ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

21.01.2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացնելու առաջին նիստի

Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ

Ս. թ. հունվարի 21-ին, ժամը՝ 15:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2026 թվականի մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի առաջին նիստը: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը, նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Վահրամ Պապիկյանը, Մարինե Սահինյանը, Լիլիթ Առաքելյանը, Մարգարիտա Հովսեփյանը, Արմինե Ասուլյանը և Անահիտ Շահինյանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Մելիքսեթյանը նախ ողջունեց ներկաներին և մանրամասն ներկայացրեց մասնակցային բյուջետավորման աշխատակարգը ու միջոցառումների իրականացման ժամանակացույցը: Հայտնեց նաև, որ անցած տարվա համեմատ, այս տարի Լոռի Բերդ համայնքի ավագանին ընդունել է որոշում «Մասնակցային բյուջետավորում 2026» ծրագրին տրամադրել կրկնակի գումար: Տեղեկացրեց նաև, որ նախապատրաստական փուլը սկսվելու է ս. թ. հունվարիի 21-ից մինչև հունվարի 22-ը, որին հաջորդելու է իրազեկման փուլը՝ տևելու է ս. թ. հունվարի 23-ից փետրվարի 03-ը: Իրազեկման փուլում հանդիպումներ է նախատեսվում համայնքի բնակավայրերի բնակիչների հետ, որպեսզի բնակիչներին ներգրավվենք մասնակցային բյուջետավորման ծրագրի մեջ:

Հանձնաժողովի անդամները իրենց պատրաստակամությունը հայտնեցին առաջիկա իրենց անելիքների վերաբերյալ:

Է. Մելիքսեթյանը ըստ ժամանակացույցի բնակչության իրազեկման փուլի ժամկետների վերաբերյալ տեղեկացրեց և հայտարարեց աշխատանքների մեկնարկի մասին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Մելիքսեթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պապիկյան

Լ. Առաքելյան

Մ. Հովսեփյան

Ա. Ասուլյան

Ա. Շահինյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Սահինյան